

ՄԱՍ 8. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հաշվետու ժամանակահատվածում պետական վիճակագրության ոլորտում իրականացված՝ Եռամյա և տարեկան ծրագրերով նախանշված և այլ միջոցառումները ֆինանսավորվել են հետևյալ հիմնական աղբյուրներից.

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե. նախատեսվել է ընդամենը 5 966 151.56 հազար դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2013 թվականին՝ 1 188 827.28 հազար դրամ, 2014 թվականին՝ 2 786 752.22 հազար դրամ (որից Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման նպատակով 1 129 360.00 հազար դրամը Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից, ինչը փոխհատուցվել է Եվրամիության կողմից 2 մլն. Եվրո դրամաշնորհի միջոցներով) և 2015 թվականին՝ 1 990 572.07 հազար դրամ: Փաստացի ծախսը կազմել է ընդամենը՝ 5 839 822.04 հազար դրամ, այդ թվում ըստ տարիների՝ 2013 թվականին՝ 1 138 133.79 հազար դրամ, 2014 թվականին՝ 2 748 887.22 հազար դրամ և 2015 թվականին՝ 1 952 801.03 հազար դրամ: Ծախսը նախատեսվածի նկատմամբ կազմել է 97.9%, այդ թվում ըստ տարիների՝ 2013 թվականին՝ 95.7%, 2014 թվականին՝ 98.6% և 2015 թվականին՝ 98.1%:

2. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհներ. Դրամաշնորհային միջոցներով իրականացված ծրագրերի ֆինանսական հոսքերի կառավարումն իրականացվել է ընդամենը՝ 350 527.32 հազար դրամի չափով, այդ թվում ըստ տարիների՝ 2013 թվականին՝ 1 938.5 հազար դրամի, 2014 թվականին՝ 129 144.83 հազար դրամի, 2015 թվականին՝ 219 443.99 հազար դրամի չափով: